



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԼԵԶՎԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

«19» հուլիսի 2007թ. հ. 213 Երևան, Կիևյան 16, հեռախոս 26-68-60

ՀՀ ԿԳՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱԿԱՐ
Ս. ՄԻՆԱՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մինասյան,
Ի կատարումն Ձեր 18.07.07թ. 21-08-16/942 հանձնարարականի՝ կից ներկայացնում ենք ՀՀ ԿԳՆ լեզվի պետական տեսչության՝ ՀՀ կառավարության 19.09.2002թ. հմ. 1610-Ն որոշմամբ հաստատված կանոնադրությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ՄԻՐԶՈՅԱՆ



« 18 » հոկտեմբերի 2002 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2002 թվականի N 1610-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆ-
ՐԱԾՈՒԹՅԱՆ ԼԵՅԻՒ ՊԵՏԱԿԱՆ ՏԵԽՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՆԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԿԱՌՈՑՎԱԾՔԸ ՀԱՅԱՏՍԵՆՈՒ ՍՍՈՒՐ

Ռեկվազիտելով «Պետական կառավարչական հիմնադրվների մասին» Հայաս-
տանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետով և Հայաստանի Հանրա-
պետության Նախագահի 2002 թվականի մարտի 16-ի ԱՀ-1064 հրամանագրով սահ-
մանված կարգի 4-րդ կետին համապատասխան, հնչյալն նաև ի կատարումն Հա-
յաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 6-ի «Հայաս-
տանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության համակարգի
քաղաքականության և մի շարք պետական մարմինների վերակազմակերպման մա-
սին» N 203 որոշման 4-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյունը որոշում է՝

1. Հաստատել՝

ա) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության
լեզվի պետական տեսչության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության
լեզվի պետական տեսչության կառուցվածքը՝ համաձայն N 2 հավելվածի.

2. Առյժն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌՈՒՄԵՆՏ

2002 թ. հոկտեմբերի 14
Երևան

NK455



58.1211

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2002 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1610 - Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Վ Ա Ղ Ո Ւ Թ Յ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱՆՈՒՆԱԿՐՈՒԹՅԱՆ ԼԵՅԻՒ ՊԵՏԱԿԱՆ ՏԵԽՆՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՊԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության
լեզվի պետական տեսչությունը (այսուհետ՝ տեսչություն) Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կազմում
գործող Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական
մարմին է, որն օրենքով, իսկ առանձին դեպքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության
օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրավասացմունք է վերահսկողական գործա-
ռույթներ և կիրառում պատասխանատվության միջոցներ Հայաստանի Հանրապետության
լեզվական քաղաքականության բնագավառում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապե-
տության անունից:

2. Տեսչությունն ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դա-
րարեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Տեսչությունը
գործում է իր կանոնադրության համաձայն, որը, Հայաստանի Հանրապետության կրթու-
թյուն և գիտության նախարարի (այսուհետ՝ նախարար) ներկայացմամբ, հաստատում է
Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Տեսչության լիազորությունները սահմանվում են օրենքով, Հայաստանի Հանրա-
պետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, Հայաստանի Հանրա-
պետության կառավարության որոշումներով, նախարարի հրամաններով, հնչյալն նաև
Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4. Տեսչությունը իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապե-
տության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերին համապատասխան:

NK455

12. Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների համանման կազմակերպությունների հետ համագործակցություն, փոխարարած այցելություններ և փոփոխություններ:

13. Լեզվական քաղաքականությանը վերաբերող հարցերին նվիրված խորհրդակցությունների, գիտատեղիների ու այլ միջոցառումների կազմակերպում:

IV. ՏՄԱՇՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

9. Տեսչությունը կառավարում է նախարարը: Տեսչության անմիջական ղեկավարումն իրականացնում է տեսչության պետը, որին, մինչև քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար միջուկի անցկացման համապատասխան կարգը գործողության մեջ դնելը, պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է նախարարը: Հայաստանի Հանրապետության վարչակազմի համաձայնությամբ:

Իր գործունեության ընթացքում տեսչության պետն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Աստիճանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, նախարարության կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

10. Տեսչության պետը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության պետական լեզվական քաղաքականության բնագավառում վերահսկողական գործառնական իրականացման և պատասխանատվության միջոցների կիրառման, ինչպես նաև դրանց օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության համար:

11. Տեսչության պետը հաշվետու է Հայաստանի Հանրապետության վարչակազմի նախարարին, իսկ քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաև նախարարության աշխատակազմի ղեկավարին:

12. Տեսչության պետը

ա) ղեկավարում է տեսչության գործունեությունը, պատասխանատու է տեսչության առջև դրված խնդիրներին և գործառնական իրականացման համար:

բ) նախարարին կամ նրա համապատասխան տեղակալին ներկայացնում է առաջարկություններ օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառի նպատակների ու խնդիրների վերաբերյալ:

գ) իր իրավասության սահմաններում արձակում է կարգադրություններ և տակնուցուցումներ ու համեմատարարներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության և տեսչության առումից, ինչպես նաև տակն է տեսչության առումից հանդես գալու լիազորագրեր, այդ բնույթի նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

դ) նախարարության աշխատակազմի ղեկավարին իր իրավասության սահմաններում ներկայացնում է առաջարկություններ տեսչության աշխատողների նկատմամբ խորհրդատվական կամ կարգապահական տրայֆի միջոցներ կիրառելու վերաբերյալ:

ե) պարբերաբար նախարարին է ներկայացնում տեղեկատվություն տեսչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին:

զ) ապահովում է նախարարի հրամանների, ցուցումների, հանձնարարականների ու առաջարկումների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում նախարարին:

լ) նախարարության և սույն կանոնադրությունների համապատասխան սահմանում է տեսչության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները:

ը) կատարում է աշխատանքի քաշիւումն իր տեղակալների միջև:

թ) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում կառուցում կամ ուժը կորցրած է ճանաչում տեսչության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, իրականացնելը, կարգադրությունները և ցուցումները:

ժ) լսում է տեսչության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության մասին հաշվետվությունները, քննարկում դրանց գործունեության ստուգման արդյունքները:

Ճա) վերահսկողություն է իրականացնում տեսչության կառուցվածքային ստորաբաժանումների օգտագործմանը հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ:

Ըբ) նախարարին ներկայացնում է առաջարկություններ տեսչության կառուցվածքի և աշխատողների թվի, ինչպես նաև տեսչության խորհրդակցական մարմիններ ստեղծելու վերաբերյալ: